



ՄԱՍՆԱԳԻՏԱԹՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

Ուղեցույցը նախատեսված է ՀՊՏՀ առկա բակալավրիատի ուսանողների համար, որտեղ ներկայացվում են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնադրույթները, ինչպես նաև գիտելիքի գնահատման սկզբունքները:

Երևան
2016



Ռեկտորի ողջույնի խոսքը

Սիրելի առաջին կուրսեցիներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանող դառնալու առթիվ և հույս հայտնում, որ համալսարանական կրթություն ստանալու ճանապարհին ճիշտ ընտրություն եք կատարել:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը տնտեսագետ կադրեր պատրաստող Հայաստանի մայր բուն է, որը, պահպանելով իր լավագույն ավանդույթները, այսօր զարգանում ու առաջ է շարժվում ժամանակի պահանջներին համապատասխան՝ կերտելով նոր հաջողություններ, իր տասնամյակների պատմությունը հարստացնելով նոր ձեռքբերումներով:

Մեր համալսարանը վերջին տարիներին ունեցել է զգալի ձեռքբերումներ՝ գործունեության տարբեր ուղղություններով. ստեղծվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որտեղ գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու և վարձատրվելու հնարավորություն են ստանում նաև ուսանողները, համալսարանը ներգրավվել է միջազգային մի շարք ծրագրերում և ներկայում աշխատակիցներին, ուսանողներին նոր հնարավորություններ է ընձեռում «Էրասմուս+» փոխանակ-

ման ծրագիրը, թվայնացվում է համալսարանի գրադարանը, բազմազանեցվում են գրքային ֆոնդը ձեզ հասանելի դարձնելու եղանակները, ինչի վկայությունը համալսարանի բակում տեղադրված եզակի QR գրադարանն է, ինչպես նաև «Խոսող պատեր» նախագիծը, գործարկվել են նորագույն տեխնոլոգիաներով հագեցած լսարաններ, ինչպես նաև միջազգային ծրագրերի կենտրոնը: Մարզաբնակ ուսանողների համար գործում է «Տնտեսագետ» ուսանողի տունը, աշխատակիցների և ուսանողների համար հրաշալի վայր է Դիլիջանում գտնվող մեր մարզաառողջարանը՝ «Տնտեսագետը», ներդրվել են սոցիալական մի շարք ծրագրեր: Միջավայրի արդիականացումը ևս կարևոր ենք համարել, ինչու, կարծում եմ, դուք արդեն համոզվել եք: Մեր համալսարանի բարենորոգ մասնաշենքերը, ճեմարահները, լսարանները և գողտրիկ բակը տպավորել են ոչ միայն մեր ուսանողներին և աշխատակիցներին, այլև մեր հյուրերին:

Սիրելի ուսանողներ

Ներկա հանգրվանում մեր գլխավոր նպատակը կրթության որակի բարձրացումն է, և բոլոր ջանքերն այժմ միտված են այդ խնդրի լուծմանը: Նախորդ շրջանում մեր կատարած աշխատանքները ստեղծել են այն նախադրյալները, որոնք թույլ են տալիս մտածելու կրթական ծառայության որակը ևս մեկ աստիճանով բարձրացնելու մասին: Այստեղ համալսարանի ղեկավարությունն ունի ձեր աջակցության կարիքը և հուսով եմ, որ համատեղ, համագործակցաբար և անկեղծ սրտացավությամբ մենք կկարողանանք հարթել խնդիրները, բարելավել կրթության որակը:

Մաղթում եմ ձեզ բարի երթ և հույս հայտնում, որ այս ուղեցույցը օգտակար կլինի ձեզ համար՝ հատկապես ուսումնառության առաջին շրջանում:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1. Համալսարանի ուսանողներն իրավունք ունեն.**
- 1.1. ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,
- 1.2. ըստ նախասիրությունների՝ ներգրավելու ուսանողական գիտահետազոտական աշխատանքներում,
- 1.3. մասնակցել ուսուցման որակի և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման գործընթացներին, բողոքարկելու դեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 1.4. անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ինտերնետ սրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մարզական և առողջարանային հենակետերից, մասնակցելու գիտաժողովներին, սեմինարներին և երիտասարդական համաժողովներին,
- 1.5. հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- 1.6. ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ,
- 1.7. կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին,
- 1.8. ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ստանալու երկուսից ոչ պակաս արձակուրդ՝ առնվազն 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- 1.9. մասնակցելու կրթության բովանդակության ձևավորմանը, ծանոթանալ ուսումնական պլանին և անհատական ուսումնառության ծրագրին,
- 1.10. ստանալու տեղեկատվություն հաշվարկված գնահատականի և հաշվարկի սկզբունքների վերաբերյալ,

- 1.11. ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և իրենց իրավունքներին ու պարտականություններին առնչվող այլ իրավական և ակադեմիական փաստաթղթերին, ուսումնառության պայմանների վերաբերյալ համալսարանի հետ կնքելու պայմանագիր,
 - 1.12. լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մեկ տարի ժամկետով (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),
 - 1.13. սեփական ցանկությամբ ընդմիջելու ուսումը և զորակոչվելու բանակ, իսկ զորացրվելուց հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու դիմում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ,
 - 1.14. ցանկության դեպքում սահմանված կարգով ստանալու բնակատեղ հանրակացարանում,
 - 1.15. համալսարանում սահմանված կարգով տեղափոխվելու նախասիրած մասնագիտությամբ սովորելու, իսկ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով՝ այլ բուհ՝ ներառյալ օտարերկրյա:
- 2. Համալսարանի ուսանողները պարտավոր են.**
 - 2.1. պահպանել համալսարանի կանոնադրության դրույքները և ներքին կարգապահական կանոնները, բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը,
 - 2.2. հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել փորձառություններին,
 - 2.3. սահմանված ժամկետում կատարել ուսումնական պլանով նախատեսված բեռնվածությունը,
 - 2.4. տիրապետել ապագա մասնագետին անհրաժեշտ գիտելիքին, հմտություններին և կարողություններին:
- 3. Ուսանողների ֆինանսական իրավունքները, պարտականությունները և դրանց իրականացման կարգը**
 - 3.1. Օգտվել ուսման տարեկան վարձի՝ մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից.
 - 3.1.1. *Ուսանողի ուսման վարձը, ուսման առաջադիմության հիման վրա, ուսանողական նպաստի ձևով, լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է 77 Կառավարության կողմ*

մից՝ ամեն տարի տվյալ բուհին և մասնագիտությանը հատկացվող տեղերի ու ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

- 3.1.2.** Սոցիալապես անապահով ուսանողներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի համապատասխան փոխհատուցում տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.1.3.** Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Մյուս կուրսերում ուսանողական նպաստ տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:
- 3.1.4.** Ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական վիճակի արդյունքների հաշվառմամբ, համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանված են «ՀՊՏՀ-ում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգով:
- 3.2.** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուսանողները ստանում են ուսանողական կրթաթոշակ պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակներ, դրամաշնորհներ, ուսանողական վարկեր: Պետական կրթաթոշակը խրախուսման նպատակով տրվում է գերազանց կամ լավ առաջադիմություն և հասարակական ակտիվություն ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին: Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների:
- 3.3.** Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ու-

սանողները կարող են ստանալ բարոյական և /կամ նյութական խրախուսանք:

- 3.4.** Վճարովի համակարգում սովորողները պարտավոր են վճարել սահմանված ուսման վարձը ուսումնառության յուրաքանչյուր կիսամյակի համար: Ուսման վարձը յուրաքանչյուր կիսամյակի առաջին ամսվա ընթացքում չվճարելու դեպքում ուսանողը կարող է հեռացվել համալսարանից:
- 3.5.** Ուսման վարձը կայուն է ուսումնառության պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի ողջ ժամանակահատվածի համար՝ ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում:
- 3.6.** Կիսամյակում վճարված ուսման վարձը չի վերադարձվում, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումն ընդհատելու դեպքի: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չաճցած ժամկետին:
- 3.7.** Եթե վճարովի հիմունքներով սովորողը հեռացվել է ուսման վարձը չմուծելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ մինչև հրամանագրվելը պետք է վճարի և՛ նախկին պարտքը, և՛ տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը:
- 3.8.** Վճարովի համակարգի ուսանողի ավելի վճարած ուսման վարձը, իբրև կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կուրսի ուսման վարձ, իսկ ավարտական կուրսում՝ վերադարձվում:
- 3.9.** Վճարովի համակարգի ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո դրա մասին պարտավոր է տեղեկացնել դեկանատ՝ ներկայացնելով վճարման մասին հավաստող համապատասխան փաստաթուղթ:
- 3.10.** Ձինվորական ծառայության մեկնելու կապակցությամբ, տարկետման պատճառով ուսումն ընդհատելու և հետագայում սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնելու դեպքում ուսման վարձը վճարվում է նախկին պայմանագրով նախատեսված չափով:
- 3.11.** Ուսման վարձը վճարվում է կանխիկ՝ համալսարանի դրամարկղ կամ փոխանցման կարգով՝ համալսարանին սպասարկող բանկերում բացված հաշվարկային հաշիվներին:

4. Ուսանողները պարտավոր են խնամքով վերաբերվել համալսարանի սեփականությանը (գույք, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, սարքավորումներ և այլն): Համալսարանի սեփականություն համարվող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Ուսանողներին, առանց համալսարանի ղեկավարության թույլտվության, արգելվում է լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել տարբեր սարքավորումներ:

5. Ուսանողների բարձր առաջադիմության, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար համալսարանում սահմանված են հետևյալ խրախուսանքները.

- ա/** շնորհակալության հայտարարում,
- բ/** պատվոգրով պարգևատրում,
- գ/** նվերով պարգևատրում,
- դ/** դրամական պարգևատրում:

Խրախուսանքի մասին տրվում է ռեկտորի հրամանը՝ այդ մասին տեղյակ պահելով ուսանողությանը: Խրախուսանքի մասին հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:

6. Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա լիազորած անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ համալսարանից հեռացվել:

7. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- ա/** նկատողություն,
- բ/** խիստ նկատողություն,
- գ/** համալսարանից հեռացում /ազատում/:

8. Ուսանողը հեռացվում է բուհից.

- ա/** անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունք-

ներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,

- բ/** բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում,
- գ/** բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում,
- դ/** 180 ժամ բացակայելու դեպքում:

Ուսանողին հեռացնելիս հաշվի է առնվում նաև համալսարանի ուսանողական խորհրդի կարծիքը: Կարգապահական տույժերը կիրառվում են անմիջապես զանցանքի հայտնաբերման պահից: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում մոր կարգապահական տույժի չի ենթարկվում, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված: Արգելվում է ուսանողներին բուհից հեռացնել հիվանդության, ակադեմիական, հղիության և ծննդաբերության և այլ արձակուրդների ընթացքում: Համալսարանից հեռացվելու դեպքում ուսանողի աշխատանքային գրքույկում նշում է կատարվում ուսման ժամանակահատվածի մասին՝ առանց հեռացման պատճառները նշելու:

- 9.** Ուսանողը ազատվում է բուհից.
 - ա/** իր դիմումի համաձայն,
 - բ/** այլ բուհ տեղափոխվելու դեպքում:
- 10.** Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.
 - ա/** ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,
 - բ/** առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,
 - գ/** հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

11. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են սահմանված կարգով՝ հաստատված ուսումնական պլաններին և ծրագրերին համապատասխան:

12. Ուսումնական դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և փակցվում հաջորդ կիսամյակը սկսվելուց ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Ուսանողների ուսումնական բեռնվածության առավելագույն ժավալը չպետք է գերազանցի շաբաթական 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները:

- 13.** Համալսարանում դասի (զույգ ակադեմիական ժամի) տևողությունը 80 (ութսուն) րոպե է: Ուսումնական պարապմունքների մեկնարկի և ավարտի մասին դասախոսները և ուսանողները տեղեկացվում են զանգի ազդանշանով: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ առնվազն 10 րոպե տևողությամբ:
- 14.** Չանգից հետո ուսանողի մուտքը լսարան, մինչև ընդմիջումը, առանց դասախոսի թույլտվության, արգելվում է: Պարապմունքների բնականոն անցկացման համար բոլոր ուսումնական և կից տարածքներում պետք է պահպանվի լռություն: Չի թույլատրվում ընդհատել պարապմունքները, դրանց անցկացման ժամանակ մտնել լսարան և դուրս գալ լսարանից:
- 15.** Լսարաններում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է ակադեմիական խմբերի և ենթախմբերի:
- 16.** Յուրաքանչյուր ակադեմիական խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից ընտրվում է ավագ:
Խմբի ավագն անմիջաբար ենթարկվում է ֆակուլտետի ղեկանին, իր խմբին տեղեկացնում նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:
Խմբի ավագի պարտականություններից են.
ա/ դասախոսի հանձնարարությամբ ուսանողների հանախումների անհատական հաշվառումը,
բ/ ուսանողների չներկայանալու կամ ուշանալու մասին ֆակուլտետի ղեկանին ամենօրյա հաղորդում ներկայացնելը՝ նշելով պատճառները,
գ/ դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը,
դ/ ըստ հերթականության՝ խմբում ամեն օր հերթապահ նշանակելը,

ե/ անորակ, ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ֆակուլտետի ղեկանին տեղյակ պահելը:

Խմբի ավագի հանձնարարականները, վերը նշված պարտականությունների սահմաններում, պարտադիր են խմբի բոլոր ուսանողների համար:

- 17.** Յուրաքանչյուր ակադեմիական խմբի համար լրացվում է սահմանված ձևի մատյան, որը պահվում է ֆակուլտետի ղեկանատում և ամեն օր, պարապմունքները սկսվելուց առաջ, հանձնվում դասախոսին, վերջինիս հսկողությամբ ավագը նշումներ է կատարում պարապմունքներին ուսանողների հաճախումների վերաբերյալ, իսկ դասախոսն արձանագրում է գործնական պարապմունքներին ուսանողների ակտիվությունը՝ համապատասխան գնահատումներով և ստորագրում է:
- 18.** Համալսարանի մասնաշենքերում արգելվում է բարձրաձայն խոսակցությունը, աղմուկը, պարապմունքների ժամանակ՝ էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը:
Խստիվ արգելվում է ծխելը և ոգելից խմիչքներ օգտագործելը:

2. ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Կրեդիտային համակարգը Եվրոպայում լայն կիրառություն է ստացել հատկապես վերջին տասնամյակում՝ Կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի (ECTS) ստեղծման արդյունքում: Ըստ կրեդիտների փոխանցման և կուտակման միասնական համաեվրոպական համակարգի՝ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Դա նախատեսված է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար: ECTS-ի դրույթների վրա էլ հիմնված է Հայաստանի Հանրապետության բուհերում ներդրվող համակարգը: Կրթական ծրագրի բոլոր դասընթացների համար սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողին

ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ բեռնվածությունը: Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը համապատասխան դասընթացը հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:

Բուհական կրթական ծրագրերում ընդգրկված լինելու և առավելագույն առաջընթաց արձանագրելու համար ուսանողը յուրաքանչյուր կիսամյակ պետք է ունենա 30 կրեդիտ բեռնվածություն:

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող՝ բոլոր ուսումնական աշխատանքները (մասնակցություն դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և փորձառություններին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարում, քննություններին նախապատրաստվել և հանձնել, անհատական հետազոտություն և այլն):
- Ուսանողը ստանում է կրեդիտ միայն դասընթացով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Դասընթացին հատկացված կրեդիտների լրիվ քանակը նա վաստակում է քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միաժամանակ:
- Կրեդիտը չի փոխարինում թվանշանով գնահատմանը, և վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում ըստ ստացած թվանշանների:
- Կրեդիտը չի վերաբերում գիտելիքի որակին, դա որոշվում է ակադեմիական առաջադիմությամբ: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխներգործության որևէ կապ չկա:

Կրեդիտային համակարգ ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

- Կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:

- Կրեդիտներ են ամրագրվում կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, փորձառություններին, անհատական, ավարտական աշխատանքներին և այլն:

ECTS կրեդիտը համարժեք է 30 ժամյա (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Տարեկան ուսումնական գործընթացը կազմակերպվում է ըստ երկու՝ աշնանային և գարնանային կիսամյակների: Ուսումնական պարապմունքները յուրաքանչյուր կիսամյակում իրականացվում են 16-ական շաբաթ, և 4-ական շաբաթ տրվում է քննություններին:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է (ներառյալ ինքնուրույն արտալսարանային աշխատանքը), որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

Ըստ գործող կարգի՝ բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կարող է կազմել 23-30 ժամ¹:

3. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մասնագիտական ամբիոնները կազմում են ուսանողի ուսումնառության անհատական ծրագիր (հատուկ ձևաթերթի միջոցով), որը ներառում է բակալավրիատի ութ կիսամյակների ընթացքում առաջադրվող դասընթացները: Յուրաքանչյուր առարկայի համար նշվում է համապատասխան կրեդիտը: Յամաձայն նորմատիվային բազայի՝ յուրաքանչյուր կիսամյակի գումարային կրեդիտների քանակը պետք է լինի 30, ութ կիսամյակների ընթացքում՝ 240: Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը պետք է համապատասխանի ակադեմիական կրեդիտների բաշխման ներուհական նորմատիվներին, որոնք հաստատվում են ՀԳՏՀ գիտական խորհրդի կողմից: Անհատական ծրագրի մեջ արտահայտվում են ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացների ցանկը՝ ըստ կիսամյակների: Ընտրովի դասընթացների ցանկից ուսանողն ինքն է կատարում ընտրություն և գրանցվում համապատաս-

¹ Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների:

խան դասընթացներին: Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրն ամրագրված չէ և կարող է ուսումնառության ընթացքում ենթարկվել հիմնավորված փոփոխությունների: Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը համապատասխան ամբիոնների կողմից ներկայացվում է ուսանողներին:

4. ԿԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀՊՏՀ-ում ներդրված են կամավոր ընտրովի դասընթացների մոդուլներ: Ընտրովի դասընթացներն արտահայտվում են ուսումնական պլաններում: Յուրաքանչյուր ընտրովի դասընթաց մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում: Միասնական համակարգով համապատասխան նորմատիվներով ընտրովի դասընթացներ կարող են ներդրվել բոլոր մասնագիտությունների ուսանողների համար նաև ընդհանուր հումանիտար, բնագիտական և մաթեմատիկական առարկաներից:

Եթե տվյալ խմբում նախատեսվել է մեկ ընտրովի դասընթաց, ապա պետք է առաջարկվի առնվազն երկու ընտրովի դասընթացների անվանում, երկու ընտրովի դասընթացների դեպքում՝ երեք և ավելի, երեքի դեպքում՝ առնվազն չորս և այլն:

4.1. Ընտրովի դասընթացներին գրանցվելու գործընթացը

- Առաջին կուրսում ուսանողներն ընտրովի դասընթացներ չեն ուսումնասիրում:
- Յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև ապրիլի 10-ը ուսանողները մանրամասնորեն տեղեկացվում են հաջորդ ուսումնական տարվա ընտրովի դասընթացների ծրագրերին, համառոտագրերին, ընտրության պայմաններին (ներկայացված դասընթացներից քանիսը պետք է ընտրվի), դրանց բովանդակությանը:
- Ըստ մասնագիտական խմբերի՝ ուսանողների գրանցումը կատարվում է տեղեկատվությունը նրանց տրամադրելուց հետո՝ մինչև մայիսի 1-ը: Տվյալ ընտրովի դասընթացը համարվում է կայացած, եթե գրանցվել է առնվազն 25 ուսանող: Հակառակ դեպքում տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին առաջարկվում է միանալ որևէ կայացած խմբի:

5. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուսուցման արդյունքների հաշվարկման կրեդիտային համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գնահատման դաշտում ընդգրկված է նաև ուսանողների անհատական և ինքնուրույն աշխատանքը: Հետևաբար՝ գնահատման նույն հարթությունում են լսարանային աշխատանքը, թեստային և այլ գրավորները, սեմինարների ընթացքում՝ բանավոր պատասխանները, գործնական պարապմունքների արդյունքները, անհատական աշխատանքը:

Կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան՝ ՀՊՏՀ-ում ներդրվել է ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգ: Ուսանողի՝ որոշակի առարկայի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում գնահատման գործոնների և դրանց միավորների հիման վրա՝ հաշվի առնելով հաճախումները և ընթացիկ ակտիվությունը, անհատական աշխատանքը, գիտելիքների ընթացիկ ստուգումը և ամփոփիչ քննությունը: Ուսանողների գնահատումն իրականացվում է 20 միավորային սանդղակով, որտեղ անցողիկ շեմը համարվում է 8-ը:

Աղյուսակ 1

Բազմագործոնային գնահատման համակարգի գործոնները և միջակայքը

Գ Ո Ր Ծ Ո Ն Ն Ե Ր		Գնահատական
<i>քննությանը ավարտվող, անհատական աշխատանք պարունակող դասընթացների համար</i>		
1	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-4
2	Ուսանողի անհատական աշխատանք	0-2
3	Ընթացիկ ստուգում	0-2
4	Ամփոփիչ քննություն	0-12

Գ Ո Ր Ծ Ո Ն Ն Ե Ր		Գնահատական
<i>քննությանը ավարտվող, անհատական աշխատանք չպարունակող դասընթացների համար</i>		
1	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-6
2	Ընթացիկ ստուգում	0-2
3	Ամփոփիչ քննություն	0-12

Գ Ո Ր Ծ Ո Ն Ն Ե Ր		Գնահատական
<i>ստուգարքով ավարտվող դասընթացների համար</i>		
1	Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն	0-12
2	Ամփոփիչ ստուգում	0-8

Բոլոր գնահատականները գրանցվում են առանց կլորացման, ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

Հաճախումների և ակտիվության բաղադրիչը անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար գնահատվում է 0-4, իսկ անհատական աշխատանք չպարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների համար 0-6 միավոր միջակայքում՝ 1,0 միավոր քայլով:

Անհատական աշխատանքի գնահատման նվազագույն քայլը 0,5, ամփոփիչ բանավոր քննության դեպքում՝ 1, թեստային ամփոփիչ քննության դեպքում՝ առնվազն 0,25 միավոր է: Գիտելիքի ընթացիկ ստուգումն անցկացվում է գրավոր (եթե անգամ ամփոփիչ քննությունը բանավոր է) տվյալ դասընթացի դասաժամի ընթացքում: Գրավորների գնահատման արդյունքները գրանցվում են ամփոփաթերթում ամենաուշը հաջորդ աշխատանքային օրը: Գիտելիքի ընթացիկ ստուգումը գնահատվում է 0-2 միավոր միջակայքում՝ նվազագույնը 0,25 միավոր քայլով: Ամփոփիչ բանավոր քննություններն անցկացվում են հանձնաժողովներով՝ ամփոփիչ ատեստավորման քննությունների նման: Բանավոր քննության գնահատականի բողոքարկումը կատարվում է լսարանում՝ գնահատականը հայտնելուց անմիջապես հետո:

Հաճախումների ցուցանիշն ընթացիկ ակտիվության գործոնի գնահատականի վրա անդրադառնում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 2

Ընթացիկ ակտիվության գնահատում

Հաճախումների ցուցանիշը	Ընթացիկ ակտիվության առավելագույն գնահատականը		
	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատակային քննությամբ ավարտվող, անհատ. աշխատանք պարունակող դասընթ. համար	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատակային քննությամբ ավարտվող, անհատ. աշխատանք չպարունակող դասընթ. համար	Որպես մաս ընդհանուր հաշվարկային գնահատակային՝ ստուգարքով ավարտվող դասընթացների համար
80,1-100,0	4	6	12
60,1-80,0	3	4	8
40,0-60,0	2	2	4
Մինչև 40	0	0	0

Գիտելիքի ստուգման ամփոփիչ քննություններն իրականացվում են հետևյալ եղանակներով՝

1. թեստային-համակարգչային,
2. թեստային-լսարանային,
3. բանավոր:

Համահամալսարանական դասընթացներից գիտելիքի ստուգումը (գնահատումը) կազմակերպվում է թեստային եղանակով (ռեկտորատի որոշմամբ՝ կան համակարգչային, կան լսարանային):

Մասնագիտական դասընթացներից գիտելիքի ստուգման եղանակներն առաջարկում է ամբիոնը, որոշում ռեկտորատը:

Քննության վերահանձնում կազմակերպվում է այն դեպքում, երբ վերջնական հաշվարկային գնահատականի թվային արժեքը փոքր է 8-ից: Վերահանձնումների ժամանակ անհատական աշխատանքի, հաճախումների և ընթացիկ ակտիվության գնահատականները հաշվի չեն առնվում, և դրական գնահատական ստանալու համար պետք է ամփոփիչ քննության 12 միավորից հավաքել առնվազն 5,0 միավոր՝ առանց կլորացման, իսկ ստուգարքով ավարտվող առարկաների դեպքում՝ 8 միավորից առնվազն 3,0 միավոր:

Տվյալ դասընթացից լուծարքին մասնակցած ուսանողների համար վերջնական հաշվարկային գնահատականի առավելագույն սահման է հաստատվում 8 միավորը (C-): Եթե լուծարքից հետո վերջնական գնահատականը նույնիսկ մեծ է 8-ից, ապա այն հավասարեցվում է 8-ի՝ հիմք ծառայելով հետագայում ՄՈԳ-ը հաշվարկելու համար:

Դիպլոմի հավելված է փոխանցվում վերահանձնումից հետո ձևավորված վերջնական գնահատականը:

Գնահատման առումով, դասընթացները լինում են.

1. *տարբերակված գնահատումով*, որի դեպքում գնահատումները կատարվում են թվային և տառային նշագրումով տարբերակված գնահատականներով (ավանդական ներկայացմամբ՝ քննությամբ ավարտվող առարկաների համար),
 2. *ստուգարքով գնահատվող*, որի դեպքում դասընթացը գնահատվում է «ստուգված/չստուգված» սկզբունքով (ստուգարքով ավարտվող առարկաների համար):
- Յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 20 միավորային սանդղակով (աղյուսակ 3, 4):

Աղյուսակ 3

Տարբերակված գնահատման սանդղակ

Ավանդական գնահատական	Գնահատականը 20 միավորային համակարգում	Գնահատականի տառային նիշը
գերազանց	19,1-20	A+
գերազանց	18,1-19,0	A
գերազանց	17,1-18,0	A-
լավ	16,1-17,0	B+
լավ	15,1-16,0	B
լավ	14,1-15,0	B-
բավարար	13,1-14,0	C+
բավարար	12,1-13,0	C
բավարար	8,0-12,0	C-
անբավարար	փոքր է 8-ից	D

Աղյուսակ 4

Ստուգարքով ավարտվող դասընթացների գնահատման սանդղակ

Ավանդական գնահատական	Գնահատականը 20 միավորային համակարգում	Գնահատականի տառային նիշը
ստուգված	8,0-20	S
չստուգված	փոքր է 8-ից	U

Կիսամյակի վերջում քննաշրջանից հետո յուրաքանչյուր դասընթացի համար հաշվարկվում է վերջնական գնահատականը: Դրական գնահատականի շեմը չհաղթահարած ուսանողների համար կազմակերպվում է վերահանձնում:

Ինչպես տարբերակված, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար հաշվարկային գնահատականը նույնացվում է տառային նիշով (աղյուսակներ 3, 4):

5.1. Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն

- Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը բազմագործոնային գնահատման համակարգի միավորված գործոն են (աղյուսակ 2) :
- Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը հաշվառվում են դասախոսությունների, գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ՝ դասամատյաններում:
- Հաճախումները չեն կարող հաշվառվել դասախոսի անհատական գրառումների հիման վրա:

- Կրեդիտային համակարգի պայմաններում հարգելի կամ անհարգելի բացակայությունները չեն տարբերակվում²:
- Հաճախումների հաշվառման համար պատասխանատու է դասախոսը, նա է կատարում (կամ նրա հսկողությամբ՝ խմբի ավագը) համապատասխան գրանցումներ մատյանում:
- Բացակայությունների վերաբերյալ գրանցումները գնահատման ամփոփաթեթում կատարում է դասախոսը:
- Մատյանում և ամփոփաթեթում բացակայությունների վերաբերյալ գրանցումները վերահսկում է ֆակուլտետի դեկանը:
- Կիսամյակի ընթացքում դասամատյանում դասախոսը կատարում է ուսանողի ընթացիկ ակտիվության վերաբերյալ նշումներ, որոնց հիման վրա էլ հաշվարկվում է ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը:
- Ընթացիկ ակտիվությունը գնահատվում է տվյալ կիսամյակի ընթացքում՝ առնվազն երկու հարցումների հիման վրա:
- Հարցումները կատարվում են գործնական, սեմինար և լաբորատոր աշխատանքների ընթացքում, ինչպես նաև դասախոսությունների ժամանակ դասախոսի հարցադրումներին ուսանողների տված պատասխանների հիման վրա:
- Հարցումների վերաբերյալ գնահատումները գրանցվում են հաճախումների հաշվառման և ընթացիկ ակտիվության գնահատման մատյանում:
- Ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես հարցումների գնահատումների պարզ միջին թվաբանական:
- Հաճախումները և ընթացիկ ակտիվությունը միասին պարտադիր պետք է գնահատվեն ամփոփ ստուգարքից կամ ամփոփիչ քննությունից առաջ:

5.2. Գիտելիքի ստուգումներ

- Գիտելիքի ստուգումները կատարվում են ըստ սահմանված ժամանակացույցի, կիսամյակի ընթացքում. ա/ ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում՝ մեկ անգամ կիսամյակի վերջում,

2 Բացառություն են այն դեպքերը, երբ ուսանողը չի հաճախել դասերին անընդմեջ 2 և ավելի շաբաթ: Այս պարագայում հարցը քննարկվում է ռեկտորատի նիստում և ընդունվում համապատասխան որոշում:

բ/ քննությանը ավարտվող դասընթացների համար՝ 1 ընթացիկ ստուգում և ամփոփիչ քննություն:

- Ամփոփիչ քննություններն անցկացվում են տվյալ առարկայի դասաժամին կամ դասաժամից դուրս:
- Ամփոփիչ քննությանը հատկացվում է 40-80 րոպե:
- Դասախոսը կիսամյակի առաջին ամսվա ընթացքում պարտավոր է ուսանողներին ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական ծրագիրը, գիտելիքների ստուգումների հարցաշարը, թեմաները ուսանելու ժամանակացույցը և գիտելիքների ստուգման անցկացման կարգը (գրավոր, բանավոր, թեստային կամ համակարգչային թեստային):
- Ամփոփիչ ստուգումների ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:
- Ընդհանուր (համահամալսարանական) դասընթացների համար գիտելիքների ստուգումները կարող են կազմակերպվել կենտրոնացված՝ միացյալ հոսքերով:
- Գիտելիքները ստուգվում, գնահատվում և արդյունքները գրանցվում են ամփոփաթերթում՝ ստուգումն անցկացնելու օրը: Առանձին դեպքերում թեստային աշխատանքների ստուգումը կարող է հետաձգվել մեկ օրով՝ ամբիոնի վարիչի հիմնավորմամբ և ռեկտորատի թույլտվությամբ:
- Թեստային աշխատանքի գնահատման համար պատասխանատու է ամբիոնը:
- Չներկայացած ուսանողի համար ամփոփաթերթում կատարվում է համապատասխան նշում:
- Հարգելի պատճառով գիտելիքների ստուգմանը (թեստային կամ համակարգչային-թեստային) չներկայացած ուսանողի համար ուսումնական բաժինը կազմակերպում է կենտրոնացված՝ լրացուցիչ ստուգում:
- Ամփոփիչ քննությանը չներկայանալը հարգելի կարող է համարվել.
 - ✓ *Եթե ուսանողը կամ նրա ներկայացուցիչը մինչև գիտելիքների ստուգման կազմակերպման աշխատանքային օրվա ավարտը չներկայանալու վերաբերյալ քարտուղարություն դիմում է ներկայացնում ռեկտորի ամունով,*
 - ✓ *քարտուղարությունում պարտադիր նշում է կատարվում դիմումն ընդունելու օրվա վերաբերյալ,*
 - ✓ *տվյալ օրը կամ հետագայում դիմումին կցվում է քննությանը չներկայանալը հարգելի համարելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթ, որը ներկայացվում է համապատասխան ֆակուլտետի ղեկավար:*

- Ամփոփիչ քննությունից հետո, մեկ շաբաթվա ընթացքում կազմվում է հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքների լրացուցիչ կենտրոնացված ստուգումների կազմակերպման ժամանակացույց:
- Հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքների ստուգումները կազմակերպվում են ուղեգրերով, քննաշրջանի ավարտից հետո՝ 2-րդ շաբաթվա ընթացքում:
- Եթե ուսանողի բացակայությունը տևական է ու հիմնավորված, և այդ պատճառով նա չի հասցնում քննաշրջանի ավարտից հետո առաջին շաբաթվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերը, ապա նրա գիտելիքների ստուգման լրացուցիչ օր նշանակելու վերաբերյալ հարցը դեկանի ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատում:
- Լրացուցիչ նշանակված օրը բացակայելու դեպքում տվյալ ուսանողի համար նոր ստուգում չի կազմակերպվում կամ բացառիկ դեպքերում կարող է կազմակերպվել ռեկտորատի որոշմամբ:
- Գիտելիքի կենտրոնացված ստուգումներ կազմակերպվում են հետևյալ դեպքերում.
 - ✓ *հարգելի պատճառով չներկայացած ուսանողների համար,*
 - ✓ *լուծարքների դեպքում:*
- Կենտրոնացված քննություններին կամ ստուգարքներին ուսանողը պարտավոր է ներկայանալ ուսանողական տոմսով:

5.2.1. Գնահատման գործընթացը

1. Գիտելիքների գնահատման և դրանց արդյունքների համար պատասխանատու է ամբիոնը:
2. Նույն դասընթացի շրջանակներում գիտելիքները ստուգվում են նույն հարցաշարերով, և գնահատումն իրականացվում է նույն չափորոշիչներով և սկզբունքներով:
3. Գիտելիքների թեստային ստուգման գնահատականների մասին ղեկավարն ուսանողներին տեղեկատվություն է տալիս քննության հաջորդ օրը:
4. Գիտելիքների թեստային ստուգման հաջորդող դասախոսության կամ գործնական պարապմունքի ժամին (կամ հաստատված դասաժամից դուրս) կարող է կատարվել գնահատման արդյունքների քննարկում: Դասախոսը պարտավոր է ներկայանալ գնահատված աշխատանքներին:

տանքներով, և ուսանողները, ցանկության դեպքում, կարող են ծանոթանալ դրանց:

5. Ամբիոնը գնահատված աշխատանքը տրամադրում է ուսանողին, վերջինիս պահանջի դեպքում՝ նաև հետագայում:
6. Գնահատման վերաբերյալ վեճերը և քննական կարգի տեխնիկական խախտումները (գնահատականի սխալ գրանցում, քննացուցակում՝ ջնջումներ, բովանդակության բացթողումներ և այլն) լուծվում են ռեկտորատի քննարկմամբ՝ ղեկանի համապատասխան զեկուցագրի և ամբիոնից ստացված գրավոր բացատրության հիման վրա:

5.2.2. Գնահատականների բողոքարկումը

1. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու թեստային աշխատանքի գնահատականը դրա անցկացումից, տեղեկացվելուց և աշխատանքի արդյունքը քննարկելուց հետո՝ 10 օրվա ընթացքում:
2. Բողոքարկման դեպքում ուսանողը լրացնում և ղեկանատ է ներկայացնում բողոքարկման թերթիկը:
3. Բողոքարկման թերթիկը թեստի հետ ղեկանատը ներկայացնում է ռեկտորատ, որտեղից և ուղարկվում է ամբիոն կամ համապատասխան մասնագիտական հանձնաժողով՝ քննարկման համար:
4. Բողոքարկված թեստն անցնում է քննարկման հետևյալ փուլերը.
 - ✓ *վերանայում և վերագնահատում ամբիոնում՝ ռեկտորատի հաստատած հանձնաժողովի կողմից,*
 - ✓ *հանձնաժողովի գրավոր կարծիքի ներկայացում և հիմնավորում՝ ուսանողի և ամբիոնի վարիչի մասնակցությամբ /ամբիոնում/:*
5. Բողոքարկված թեստը ռեկտորատի որոշմամբ կարող է ուղարկվել վերագնահատման երկրորդ անգամ:
6. Քննարկման գործընթացն ամբիոնում պետք է իրականացվի բողոքարկման պահից սկսած՝ 2 օրվա ընթացքում:
7. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականը հաստատվում է բողոքարկման ամբիոնային հանձնաժողովի անդամների ստորագրությամբ:
8. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է ամփոփաթերթում:

9. Բողոքարկման արդյունքում գնահատականը կարող է նաև իջեցվել:

5.3. Անհատական աշխատանք

Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը հաշվառում և արժևորում է ուսանողի անհատական աշխատանքը (առաջադրանքը), որը կարևոր գործոն է որոշակի դասընթացի վերաբերյալ վերջնական գնահատականը ձևավորելիս:

- Կիսամյակի ընթացքում ուսանողին հանձնարարվում է երկուսից ոչ ավելի անհատական աշխատանք:
- Այն մոդուլի համար, որն ուսումնասիրվում է մեկ կիսամյակից ավելի, անհատական աշխատանք հանձնարարվում է միայն մեկ անգամ՝ վերջին դասընթացի շրջանակներում:
- Անհատական առաջադրանքը հանձնարարվում է կիսամյակի առաջին ամսվա ընթացքում:
- Անհատական աշխատանքի թեմատիկական և տրման ձևը հաստատում է ամբիոնը:
- Անհատական աշխատանքի թեմատիկական ընդգրկում է տվյալ դասընթացի ծրագիրը:
- Անհատական առաջադրանքների թեմաները չեն կարող կրկնվել նույն խմբի ուսանողների համար:
- Անհատական աշխատանքի իրականացման ժամկետը որոշում է դասախոսը (նվազագույնը՝ մեկ ամիս):
- Անհատական աշխատանքն իրականացվում է գրավոր (ծեռագիր կամ համակարգչային շարվածքով):
- Անհատական աշխատանքի իրականացման ընթացքում դասախոսն ուսանողի հետ խորհրդատվական արտալսարանային աշխատանք է կատարում:
- Անհատական աշխատանքը կարող է տրվել հետևյալ ձևերով.
 - ✓ *ռեֆերատ,*
 - ✓ *թեմատիկ զեկուցումներ,*
 - ✓ *մշակումներ գիտական գրականությունից,*
 - ✓ *խնդիրներ:*
- Յուրաքանչյուր անհատական առաջադրանք գնահատվում է որպես մաս վերջնական հաշվարկային գնահատականի՝ 0-2 միջակայքում:

- Տվյալ դասընթացի համար անհատական աշխատանքի գնահատականն արձանագրվում է կիսամյակի վերջում՝ նախքան ամփոփիչ քննաշրջանի սկիզբը:
- Դասախոսն անհատական աշխատանքի գնահատականն արձանագրում է ամփոփաթերթում:
- Անհատական աշխատանքի գնահատականի մասին ուսանողը պարտադիր պետք է տեղեկացվի պաշտպանությունից անմիջապես հետո:
- Անհատական աշխատանքները խստագույնս հաշվառվում են որպես փաստաթուղթ և պահպանվում ամբիոնում՝ մինչև տվյալ կիսամյակի ՄՈԳ-երի հրապարակումը:
- Անհատական աշխատանքը գնահատվում է երկու բաղկացուցչի հիման վրա.
 - ✓ *անհատական գրավոր առաջադրանք,*
 - ✓ *անհատական աշխատանքի հրապարակային բանավոր ներկայացում կամ պաշտպանություն:*
- Անհատական գրավոր առաջադրանքի գնահատումն իրականացվում է հետևյալ անհրաժեշտ պայմանների դեպքում.
 - ✓ *աշխատանքն ունի ամբիոնի հաստատած կառուցվածքը և ծավալը (A4 ձևաչափի թղթի վրա, 10–20 էջ),*
 - ✓ *գրված է հայերեն,*
 - ✓ *օգտագործված են որոշակի աղբյուրներ, որոնք նշված են գրականության ցանկում:*
- Անհատական աշխատանքում կատարված ինքնուրույն տեսական վերլուծությունները և նյութի առավել խոր, գրագետ ու հետաքրքրական բանավոր մատուցումը հնարավորություն են տալիս արժանանալու բարձր գնահատականի:
- Անհատական աշխատանքը չպետք է լինի արտագրություն սկզբնաղբյուրներից և այլ ուսումնասիրություններից, գրագողության դեպքում դա կգնահատվի 0:
- Դասախոսը ասիստենտի հետ գնահատում և ստորագրում է անհատական աշխատանքը՝ գրավոր (հակիրճ) հիմնավորելով նշված գնահատականը:
- Վերոնշյալ անհրաժեշտ պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում աշխատանքը չի գնահատվում և վերադարձվում է լրամշակման: Լրամշակված տարբերակը պետք է ներկայացվի դասախոսին և գնահատվի նախքան ամփոփիչ քննաշրջանը:

5.4. Փորձառության կազմակերպման և գնահատման կարգը

Ուսումնասիրտադրական փորձառությունը կազմակերպվում է ՀՀ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և գիտահետազոտական հաստատություններում: Յուրաքանչյուր ուսանողի համար փորձառության վայրում նշանակվում է ղեկավար, իսկ ամբիոնի պրոֆեսորադասախոսական համակազմից՝ փորձառության ղեկավար և/կամ փորձառության ընդհանուր համակարգող:

Նախքան փորձառության սկիզբը յուրաքանչյուր ամբիոն, ելնելով իր մասնագիտության, ինչպես նաև փորձառության անցկացման վայր ընտրված կազմակերպության բնույթից և առանձնահատկություններից, կազմում է փորձառության ծրագրեր, որոնցում ներառված առաջադրանքներով առաջնորդվում են ուսանողները:

Փորձառության գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով: Ամփոփ գնահատականը ձևավորվում է փորձառության ընթացքում, գնահատման 3 գործոնների՝ հաճախումների, ամբիոնից նշանակված ղեկավարի և հաշվետվության պաշտպանության գնահատականների (աղյուսակ 5), և դրանց կշիռների հիման վրա, և գրանցվում փորձառության ամփոփաթերթում:

Աղյուսակ 5

Փորձառության գնահատման սանդղակ

	Փորձառության գնահատման գործոններ	Գնահատական
1	հաճախումներ	0-4
2	ամբիոնի ղեկավարի գնահատական	0-4
3	փորձառության հաշվետվության պաշտպանություն	0-12

- Փորձառության հաշվետվության պաշտպանությունը կազմակերպում է ամբիոնի նիստով հաստատված հանձնաժողովը:
- Ուսանողը պետք է պարտադիր ներկայանա փորձառության հաշվետվության պաշտպանությամբ:
- Փորձառությունը համարվում է չհանձնած, եթե.
 - ✓ *փորձառության ամփոփ գումարային գնահատականը փոքր է 8-ից,*
 - ✓ *ուսանողի փորձառության հաճախումները պակաս են 40%-ից,*

✓ սահմանված ժամկետներում ուսանողը չի ներկայացրել փորձառության հաշվետվություն:

- Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է 1 անգամ:
- Ուսանողը պետք է պարտադիր մասնակցի փորձառության պաշտպանությանը, հակառակ դեպքում՝ փորձառությունը զնահատվում է անբավարար:
- Փորձառության գնահատման համար լուծարք չի կազմակերպվում:

5.5. Վերահանձնում

1. Վերահանձնումը կազմակերպվում է վերջնական հաշվարկային գնահատականի հիման վրա:
2. Կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո, նախքան վերահանձնումը դեկանատը ձևավորում է վերահանձնման թույլատրված ուսանողների ցանկը՝ այն հասանելի դարձնելով և՛ ուսանողներին, և՛ ամբիոններին:
3. Վերահանձնում է կազմակերպվում այն դեպքում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է «D»-ի՝ քննության պարագայում կամ «U»-ի՝ ստուգարքի պարագայում, այսինքն՝ թվային արժեքով փոքր է 8-ից (առանց կլորացման):
4. Չի սահմանափակվում այն առարկաների քանակը, որոնցից ուսանողը կարող է մասնակցել լուծարքի:
5. Վերահանձնման մասնակցող ուսանողը, հաստատված ժամանակացույցին համապատասխան, կարող է երկրորդ անգամ վերահանձնել տվյալ դասընթացը, եթե առաջին անգամ չի հաղթահարել դրական գնահատականի շեմը: Այս դեպքում առաջին լուծարքի արդյունքը չի գունարկվում հաշվարկված գնահատականին:

6. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԴՏՀ ուսանողական խորհուրդը ձևավորվել է 1994 թ.՝ որպես ուսանողության խնդիրներով զբաղվող ինքնակառավարման մարմին, որի գործունեությունը սահմանվում է ՀՀ օրենքների և համալսարանի կանոնադրության հիման վրա: Ուսխորհրդի նպատակներն են.

1. ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը,
2. ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
3. ուսումնակրթական և գիտական ոլորտներում աշխատանքների ծավալումը,
4. ուսանողների ազատ ժամանցի կազմակերպումը,
5. մարզական միջոցառումների անցկացումը,
6. ուսանողության շահերի ներկայացումը բուհական և արտաբուհական ասպարեզում,
7. ուսանողներին տեղեկատվությամբ ապահովումը:

Ուսանողական խորհրդի գործունեությունը ֆինանսավորվում է ՀԴՏՀ՝ տվյալ տարվա հաստատված բյուջեով նախատեսված միջոցներից և այլ աղբյուրներից:

7. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԴՏՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ), որն ունի կենտրոնական խորհուրդ և ֆակուլտետների խորհուրդներ՝ յուրաքանչյուրն իր գիտական ղեկավարով: Ամեն տարի ՈՒԳԸ-ն կազմակերպում է ուսանողական գիտական նստաշրջան, որտեղ զեկույցներով հանդես են գալիս ՀԴՏՀ ուսանողները: Լավագույններն արժանանում են մրցանակների: Գիտական նստաշրջանից հետո համալսարանը հրատարակում է ուսանողների լավագույն զեկույցների ժողովածու:

ՈՒԳԸ նստաշրջաններին մասնակցությունը ուսանողներին հնարավորություն է տալիս խորացնելու իրենց գիտելիքները, զարգացնելու վերլուծական միտքը և փորձ ձեռք բերելու ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և դրանց արդյունքները ներկայացնելու գործում:

8. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԴՏՀ-ում ուսանողների համար լրատվության աղբյուր են համալսարանի ինտերնետային կայքը (www.asue.am), «Տնտեսագետ» պաշտոնաթերթը, ուսխորհրդի պաշտոնական կայքը (www.asue-sc.am), Առաջին ուսանողական ալիքը, ինչպես նաև ՀԴՏՀ և ուսխորհրդի ֆեյսբուքյան պաշտոնական էջերը:

